ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/40

ք. Երևան «06» 07 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լևոն Թոփուզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սոցիալական հետազոտությունների ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները,

2.4.6 պայմանագրի կատարման շրջանակում հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել կատարումն ապահովելու նպատակով իր կողմից հաստատված տեղեկանքի

պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 6 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4956000 (չորս միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4.3 Սույն պայմանագրի 2.4.5 և 2.4.6 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կատարողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե

ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ**
Ք. Երևան, Կառավարական տուն 2	**Ք. Երևան, Հանրապետության 22**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900011033439	**h/h 1930000625400100**
ՀՎՀՀ 02698732	**ՀՎՀՀ 01538458**

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Տնօրեն՝**
_____ **Վ. Գասպարյան**	_____ **Լևոն Թոփուզյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«06» 07 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	79311200/1	Սոցիալական հետազոտությունների ծառայություններ	Ծառայության արդյունքում նախատեսվում է գնահատել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (Նախարարության) կողմից իրականացվող ամենամյա սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) ազդեցությունը սփյուռքում կրթության կազմակերպման, բովանդակության և դրա արդյունավորման վրա: Անուղղակի կերպով հետազոտությունը հնարավորություն կտա գնահատելու նաև ծրագրի ազդեցությունը սփյուռքում կրթության որակի և հայապահպանության գործընթացների վրա: **I. Հետազոտության առարկա.** Վերջին 10-ը տարվա մեջ իրականացված ծրագրի իրական յուրացումը և ուղղակի ու անուղղակի ազդեցությունը սփյուռքում կրթական գործի վրա: **II. Ծրագրի ընդհանուր նկարագիրը և հիմնական նպատակները.** Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրատումն ամենամյա պետական ծարգիր է, որը տարբեր տարիներին իրագործվել է տարբեր կազմակերպությունների կողմից: Ուսումնական ծրագիրը ձևավորվել է մի միասնական մոդուլի հիման վրա, որը ապահովում էր որոշակի ժառանգորդություն յուրաքանչյուր տարի տեղի ունեցող վերապատրաստումների միջև, սակայն յուրաքանչյուր կազմակերպությունը ներդնում էր իր աշխատանքին հատուկ յուրահատկությունները՝ պայմանվորված ակադեմիական, գործնական մոտեցումներով, դասախոսների ընտրությամբ: Արդյունքում՝ առանձին տարիներին վերապատրաստումներն ավելի շատ ուղղված էին նոր գիտելիքի փոխանցմանը, իսկ մյուս տարիներին՝ գործնական կարողությունների ձևավորմանը: Սփյուռքի ոսուցիչների որակական կազմը խիստ տարբերակված է, ինչը բացառում է շահառուների միասնական բնութագիրը: Նրանք գալիս են տարբեր երկրներից, տարբեր տեսակի ուսումնական հաստատություններից, տարիքը տատանվում է 18-ից մինչև 80-ը: Խիստ տարբեր է նախնական պատրաստվածությունը. մասնագիտական կրթության բացակայությունից մինչև Հայաստանում ստացած մանկավարժական կրթություն և անգամ գիտական կոչում, դասավանդվող նյութերի բովանդակությունը և այլն: Միասնական են, հավանաբար, միայն սաներին հայախոս դարձնելու և հայեցի դաստիարակելու ձգտումը: Ուստի ճանաչողական առումով վերապատրաստումների շեշտը միշտ դրվել է մանկավարժական տեխնոլոգիաների, լեզվի ուսուցման մեթոդիկայի վրա և կրում էր ստեղծագործական-հետազոտական բնույթ, ինչի արդյունքում ճանաչողական փոփոխությունները կրում էին ոչ միայն ուսուցիչները, այլև դասավանդող անձնակազմը: Բացի դասընթացներից՝ ծրագրում միշտ ներառված էին ճանաչողական շրջայցեր, թանգարանային այցելություններ, հանդիպումներ քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների հետ, ինչը նպաստում էր ուսուցչի մոտ ժամանակակից Հայաստանի մասին ավելի ավելի լայն և զգացական պատկերացումների ձևավորվմանը: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ իր առջև ծրագիրը դնում է հետևյալ խնդիրները. 1. **Անհատական-ճանաչողական մակարդակում** ա/ գիտելիքի փոխանցում բ/ կարողությունների ձևավորում	դրամ	4956000	1	Ծառայությունը մատուցվելու է հեռավար կարգով	Մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը

			2. Անհատական-հոգեբանական մակարդակում ա/ մասնագիտական նոր դիրքորոշումների ուրվագծում բ/ մոտիվացիայի բարձրացում, հետաքրքրության աշխուժացում գ/ հայրենասիրության լիքցի փոխանցում դ/ նոր գիտելիքը ինքնուրույն որոնելու ձգտում **3. Անհատական-վարչարարական մակարդակում** ա/ ուսուցիչների միջև փորձի փոխանակման համար հիմքերի ստեղծում բ/ հայաստանյան մասնագետների հետ կապերի հաստատում գ/ մանսագիտական արդյունավետության բարձրացում: **III. Ծրագրի ակնկալվող արդյունքները** Ելնելով վերոնշյալ ձևակերպված նպատակներից՝ ծրագրի շրջանակներում ակնկալվում է ապահովել հետևյալ ուղղակի և անուղղակի արդյունքները. **Ընդհանուր ծրագրի մակարդակում.** ա/ հայագիտության ոլորտում միասնական չափանիշների ուրվագծում և աստիճանաբար հստակեցում բ/ դասավանդման միասնական մեթոդիկաների ներդնում գ/ մանկավարժական կարողությունների հզորացում դ/ ոլորտային նորությունների մասին գիտելիքի տարածում ե/ ուսուցիչների ցանցի ստեղծում զ/ սփյուռքի կրթական համակարգի Հայաստանի հետ կապի ամրապնդում **Անհատական մակարդակում.** ա/ վկայականի տրամադրում բ/ մասնագիտական և մանկավարժական հիմնարար գիտելիքի մասնակի ձեռքբերում գ/ առարկայական և մանկավարժության ոլորտներում նոր գիտելիքի և նորարար տեխնոլոգիաների յուրացում դ/ հայ մշակութային արժեքների ավելի խորը գիտակցում ե/ փորձի փոխանակում զ/ դպրոցում և համայնքում ավելի մեծ նախաձեռնվածության ցուցաբերում է/ ոգևորվածության և մոտիվացիայի բարձրացում, հետաքրքրության ակտիվացում ը/ առկա ստերիոտիպիների և մասնագիտական գիտակցության «տեղախախտում» Անհատական մակարդակում ակնկալվող արդյունքները համատարած բնույթ չեն կրում և նրանցից յուրաքանչյուրը գործում է որոշակի թվաքանակի համար: **IV. Հետազոտության հիմնական արդյունքային ցուցանիշները և դրանց հնարավոր ցուցիչները** Հետազոտության հիմնական արդյունքների սահմանումը ենթադրում է նպատակային և կառավարման մոտեցումների համադրությունը: Այն իրականացվում է 2011-2020թթ. ժամանակահատվածի համար: Ա. Առաջինը պահանջվում է գնահատել, թե որքանով ծրագրի իրական արդյունքները համապատասխանում են սահմանված նպատակներին և ակնկալվող արդյունքներին: Բ. Երկրորդը պահանջվում է գնահատել, թե ինչպիսի փոփոխություններ է կրել կրթական գործը սփյուռքում՝ անուղղակի ազդեցության և չակնկալած արդյունքների տեսակետից: Ա. Առաջինի պարագայում առաջարկվում են հետևյալ քանակական և որակական ցուցիչները. 1. 2011-2020թթ. վերապատրաստված ուսուցիչներից քանիսն են շարունակում իրականացնել մանկավարժական գործունեությունը 2. 2015-2020թթ. վերապատրաստված ուսուցիչներից քանիսն են շարունակում իրականացնել մանկավարժական գործունեությունը 3. 2011-2020թթ. վերապատրաստված ուսուցիչներից քանիսն են ակտիվ կապի մեջ գտնվում վերապատրաստող անձնակազմի և Նախարարության հետ 4. 2011-2020թթ. վերապատրաստված ուսուցիչներից քանիսն են ակտիվ կապի մեջ գտնվում այլ երկրների ուսուցիչների հետ, մասնակցում փորձի փոխանակմանը					

5. 2011-2020թթ. վերապատրաստված ուսուցիչներից քանիսն են դրանից հետո դիմել են Հայաստանում մանկավարժական կրթություն ստանալու համար
6. Ինչ փոփոխություններ է կրել ուսուցիչն անձնապես և նրա կողմից տարվող դասավանդումը վերապատրաստումներից հետո, օրինակ՝
ա/ վերափոխել է դպրոցի կառավարումը, ուսումնական պլանը
բ/ ստեղծել է կամ փոփոխել է կամ սկսել է օգտագործել նոր ուսումնական ծրագիր
գ/ սկսել է կիրառել նոր մանկավարժական մեթոդներ
դ/ սկսել է կիրառել կամ ավելի լայն կիրառել հայաստանյան դասագրքերը/ուսումնական ձեռնարկները/մեթոդական գրականությունը
ե/ սկսել է մասնակցել Նախարարության կողմից կազմակերպվող միջոցառումներին
զ/ սկսել է ավելի լավ արձագանքել աշակերտների կրթական պահանջներին
է/ սկսել է հետևել տեղեկատվական նոր աղբյուրների՝ կապված առարկայի բովանդակության հետ
ը/ վերափոխել է իր պատկերացումները այս կամ այն մանսագիտական հարցի վերաբերյալ
ժ/ ձեռք է բերել նոր մասնագիտական գիտելիք
ժզ/ ավելի լավ է պատկերացրել, թե ո՞ր դեպքերում ու՞մ և ու՞ր դիմել Հայաստանում
ժբ/ հանդես է եկել նախաձեռնություններով դպրոցում/համայնքում
ժգ/ ավելի մեծ ոգևորվածությամբ է սկսել աշխատել
ժդ/ ամրապնդրվել է դիրքը աշխատավայրում
ժե/ այլ տեսակի ձեռբերումներ
ժզ/ որևէ ձեռքբերման կամ փոփոխության բացակայության պայմաններում՝ պատճառները
7. Վերաիմաստավորել են վերապատաստման դասընթացները որոշ ժամանակ անց՝ ավելի շատ դրական կամ բացասական կողմերը տեսնելով:
8. Վերապատրաստումից հետո նոր կամ նոր երևան եկած ինչպիսի պահանջմունքներ են առաջացել:
9. Ինչպիսի գոհունակություն ունեն մասնակիցները և դասախոսները վերապատաստման դասընթացներից

Բ. Երկրորդի պարագայում առաջարկվում են հետևյալ քանակական և որակական չափիչները.
10. Որոնք են վերապատրաստումների հաջողության կամ անհաջողության պատճառները:
11. Ինչպիսի փոփոխություններ են կատարվել դպրոցում/համայնքում անձնակազմի վերապատրաստումից հետո:
12. Արդյոք փոփոխվել է սաների և նրանց ծնողների հետաքրքրությունը դպրոցի կամ վերաբերմունքը ուսուցչի հանդեպ:
13. Վերափոխել է դպրոցի կառավարումը, ուսումնական պլանը (մուտք են գործել նոր առարկաներ, փոխվել են խմբերի բաժանման սկզունքները և այլն):
14. Ստեղծել է կամ փոփոխել է կամ սկսել է օգտագործել նոր ուսումնական ծրագիր
15. Ավելի արյունավետ է իրականացվում ծնողների հետ աշխատանքը:
16. Վերանայվել են օգագործվող դասագրքերի ցանկը, կամ եղած գրքերը խմբագրվել են:
17. Ստեղծվել են միջդպրոցական կապեր և համատեղ ծրագրեր/միջոցառումներ անցկացվել (Հայաստանի կամ սփյուռքի որևէ դպրոցի հետ):
18. Ավելի ակտիվ ներգրավվել են հայաստանյան համահայկական միջոցառումներին:
19. Կազմակերպվել են վերապատրաստումները տեղում՝ վերապատրաստմանը մանսակցած դասախոսների մասնակցությամբ կամ պարբերաբար դիմել են դասախոսների խորհրդատվությանը:
20. Էլ ինչ խնդիրներ են լուծվել դպրոցի մակարդակում և ինչպիսի խնդիրների լուծում դեռ ակնկալվում է:
21. Վերապատրաստումից հետո նոր կան նոր երևան եկած ինչպիսի կրթական կարիքներ են առաջացել:

Ցուցիչների ցանկը լիարժեք չէ և կարող է խմբագրվել կամ ընդլայնվել մրցույթը շահած կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) հայեցողությամբ:

V. Ծրագրի մասնակիցները և հետազոտության փորձագիտական խմբեր.

Վերապատրաստման ծրագրի թիրախ խմբերն են.
ա/ մանկավարժները

բ/ կրթօջախները
գ/ կրթօջախի սաները
դ/ կրթօջախի սաների ծնողները

Հարկ է նկատի ունենալ, որ առանձին դեպքերում վերապատրաստված մանկավարժը նաև միակ կրթական պատասխանատու է հանդիսանում տվյալ կրթօջախում կամ համայնքում:

Սակայն սույն հետազոտության համար կարևոր տեղեկություն կարող են տրամադրել նաև վերապատրաստող դասախոսներ, վերապատրաստող կազմակերպություն(ներ)ը և Նախարարությունում ծրագիրը համակարգող աշխատակիցները:

Նախնական տվյալներով հետազոտության օբյեկտ են (ստրատա) հանդիսանալու

ա/ շուրջ 580 մանկավարժ
բ/ շուրջ 200 տնօրեն/պատասխանատու
գ/ շուրջ 1000 սաներ և նրանց ծնողներ
դ/ շուրջ 30 վերապատրաստող դասախոս
ե/ 6-7 կազմակերպիչ
զ/ ՀՀ ԿԳՄՍՆ 3-4 աշխատակից:

Վերոնշվածների կապի անձնական տվյալները (էլ.հասցե և/կամ հեռախոսահամար և/կամ սոցիալական ցանցերում տվյալները (Facebook, Viber, What'sApp)) կտրամադրվեն Կազմակերպությանը: Բոլոր տվյալները կճշգրտվեն և կխմբագրվեն աշխատանքային կարգով:

Վերոնշված հետազոտության հիմնական օբյեկտը՝ ուսուցիչներին, առավել ճշգրիտ արդյունքները ստանալու նպատակով, առաջարկվում դասակարգել ըստ հետևյալ հիմքերի.

ա/ ըստ վերահսկողության և ինքնուրույնության աստիճանի
- կառավարման մեջ կենտրոնացված և ուժեղ վերահսկողության պայմաններում գործող ամենօրյա դպրոցների ուսուցիչներ
- ապակենտրոնացված համակարգում և ինքնուրույնաբար գործող մեկօրյա և ամենօրյա դպրոցների ուսուցիչներ

բ/ ըստ լեզվական և սոցիալական միջավայրի
- արևմտահայ դպրոցների ուսուցիչներ
- արևելահայ կամ խառը դպրոցների ուսուցիչներ

Հետազոտության ընտրանքը պետք է իրականացվի այնպես, որ հետազոտության վստահության մակարդակը լինի 95% ±3% սահմանային սխալի պարագայում (բացառությամբ սաների և նրանց ծնողների):

VI. Հետազոտության մեթոդիկա

Հետազոտության վերջնական մեթոդիկան կմշակվի Կազմակերպության կողմից և կհամաձայնեցվի Նախարարության հետ: Սակայն ակնկալվում է, որ հետազոտությունն իրականացվի քանակական և որակական գործիքների կիրառմամբ, առնվազն՝

- հարցում վերապատրաստված ուսուցիչների հետ
- հարցում սաների/նրանց ծնողների հետ
- հարցում տնօրենների կամ պատասխանատուների հետ
- առնվազն 12 տոկուս խմբային քննարկում
- առնվազն 20 փորձագիտական հարցազրույց

Մրցույթը շահած կազմակերպությունը կարող է առաջարկել տվյալների հավաքագրման հավելյալ գործիքներ:

Փորձագետներին ընտրելիս Կազմակերպությունը առաջնորդվում է հետևյալ նվազագույն չափանիշներով.

<u>Փորձագետ 1.</u> Գնահատումների իրականացման մասնագետը պետք է ունենա.

- հետազոտական ծրագրերի կառավարման առնվազն 3 տարվա փորձ,
- հետազոտությունների նախագծման և անցկացման փորձ,
- հետազոտական առցանց գործիքների օգտագործման հմտություններ,
- հասարակայնության հետ կապերի իրականացման փորձ,
- հայերենի գերազանց իմացություն
- վերլուծական կարողություններ

<u>Փորձագետ 2.</u> Կրթության մասնագետը պետք է ունենա.

- Մանկավարժական բարձրագույն կրթություն կամ մանկավարժական առնվազն 5 տարվա ստաժ
- Ոչ-ֆորմալ կրթության ոլորտում աշխատանքային փորձ
- Սփյուռքի կրթությանը առնչվող աշխատանքի առնվազն 2 տարվա փորձ
- Հաղորդակցման բարձր կարողություններ և հմտություններ
- Արևելահայերենի գերազանց և արևմտահայերենի բավարար իմացություն
- Սոցիալական հոգեբանական հետազոտությունների անցկացման փորձ

Այլ մասնագետների ընտրությունը Կազմակերպություն կիրականացնի ինքնուրույն:

Բոլոր փորձագետների ինքնակենսագրականները պետք է նախապես ներկայացվեն Նախարարությանը՝ համաձայնեցման նպատակով:

Նախարարությունը, իր հնարավորությունների սահմաններում, կներկայացնի բոլոր անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ՝ 10 տարվա ընթացքում անցկացված վերապատրաստումների բովանդակության և անցկացման պայմանների վերաբերյալ:

VII. Հետազոտության արդյունքները և ժամանակացույցը

Արդյունք	Ժամկետ	
	Սկիզբ	Ավարտ
Հետազոտության մեթոդիկա	պայմանագիրը ուժի մեջ մտնելու 20-րդ օրացուցային օրվանից կամ այն դեպքում, եթե ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում	10 օրացուցային օր
Հետազոտության ժամանակացույց		10 օրացուցային օր
Տվյալների հավաքագրման գործիքներ		1 ամիս 10 օր
Տվյալների հավաքագրման ընտրանքը		1 ամիս 10 օր
Հետազոտության կառուցվածքը		1 ամիս 10 օր
Հետազոտության նախնական տարբերակ		2 ամիս 20օր
Հետազոտության վերջնական տարբերակ		5 ամիս 20 օր
Հետազոտության տվյալների բազան		5 ամիս 20 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Լ. Թուխուզյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«06» 07 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ

հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական
ռեսուրսների օգտագործման

Չափաբաժնի N՝ 1
Աշխատակիցների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը
«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ն պարտավորվում է պայմանագիրը կատարել թվով 7 աշխատակիցների միջոցով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

02698732

_____ Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____ Լ. Թոփուզյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«06» 07 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79311200/1	Սոցիալական հետազոտությունների ծառայություններ												4956000	**4956000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

02698732

_____Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____ Լ. Թոփուզյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 5.1
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/40» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան 01. 07. 2021թ.

«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լևոն Թոփուզյանի, (նույնականացման քարտ՝ № 000196212, տրված՝ 005-ի կողմից 16.11.2012թ-ին), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/40 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը	«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ
Ընկերության հասցեն	ք. Երևան, Հանրապետության 22
Սպասարկող բանկի անվանումը,	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Ընկերության Հ/Հ	1930000625400100
Ընկերության ՀՎՀՀ	01538458

Ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը Լևոն Թոփուզյան

Կ.Տ

Օր/ամիս/տարի

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն /Ընկերություն՝ **«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Կոնվերս Բանկ» ՓԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ 1930000625400100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01538458

8 Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02698732**

12. Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ **900005000758**

14.Գումարը թվերով և բառերով՝ 495,600 (Չորս հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ (AMD)

17.Գործարքի /վճարման/ նպատակը՝ **Պայմանագրի կատարման ապահովման համար**

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը, որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/40

19. Վճարման պայմանները՝ **Ակցեպտավորված վճարում**

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ. "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

Հավելված 4.2
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/40» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան 01. 07. _____2021թ.

«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լևոն Թոփուզյանի, (նույնականացման քարտ՝ № 000196212, տրված՝ 005-ի կողմից 16.11.2012թ-ին), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը	«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ
Ընկերության հասցեն	ք. Երևան, Հանրապետության 22
Սպասարկող բանկի անվանումը,	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Ընկերության Հ/Հ	1930000625400100
Ընկերության ՀՎՀՀ	01538458

Ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը Լևոն Թոփուզյան

Կ.Տ

Օր/ամիս/տարի

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն /Ընկերություն՝	**«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ**
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝	**«Կոնվերս Բանկ» ՓԲԸ**
6. Վճարողի հաշվի համարը՝	1930000625400100
7. Վճարողի ՀՎՀՀ՝	01538458
8 Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝	**Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝	**02698732**
12. Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝	**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
13.Շահառուի հաշվի համարը /հշ.N/	**900008000664**
14.Գումարը թվերով և բառերով՝	743,400 (Յոթ հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր)
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16. Արժույթը (բառերով և կոդով)՝	ՀՀ դրամ (AMD)
17.Գործարքի /վճարման/ նպատակը՝	**Որակավորման ապահովման համար**
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը, որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/40
19. Վճարման պայմանները՝	**Ակցեպտավորված վճարում**
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	

22.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ. "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.